

Դիմումի լրացման ձևը և կից ներկայացվող փաստաթղթերը

1. Լրացնել Հիմնադիր խորհրդարանի պատգամավորության թեկնածուի գրանցման դիմումը:
2. Դիմումին կցել անձնագրի պատճենը, ինքնակենսագրությունը, կրթության վկայականի պատճենը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ դիմումում նշված այլ փաստաթղթեր:
3. Ինքնակենսագրության մեջ պարտադիր կերպով պետք է նշել կրթությունը, վերապատրաստման դասընթացները (վարժանքները և կրթական ցենզ չտվող այլ դասընթացները չնշել), կուսակցականությունը, աշխատանքային ուղին և ընտանեկան դրությունը:
4. Հայաստանից (Արցախը ներառյալ) դուրս գտնվելու պարագայում դիմումը և կից փաստաթղթերը սկաների միջոցով ներբեռնել համակարգիչ և ուղարկել elcomcp@gmail.com հասցեին:

Ընտրական հանձնաժողովի գործունեության հասցեներն են՝ Ալեք Մանուկյան 5/5, Ռադիոտան հարևանությամբ, մուտքը՝ Սայաթ-Նովա փողոցի կողմից (Նախախորհրդարանի գրասենյակ), հեռ. 011 785 657, 077 187 218 կամ Ակսել Բակունցի 2, բն. 82, հեռ. 010 220 567, 077 313 261: Էլեկտրոնային կապ՝ elcomcp@gmail.com

Հիմնադիր խորհրդարանի Ընտրական հանձնաժողով